



# ԲԱԶՄԱՎԵՊ

ՈՅԺԴ · 1864 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ · — ՀՈԿՏԵՄԲԵՐ

Խ Ո Ւ Լ Խ Ա Զ Ի Կ

( Ըստունակութիւն . էջ 237 : )

Հասաւ սղաւոր համբաւն 'ի մեծ  
քաղաքն կայսերաց , այն վիպասանից և  
ողբերգուաց հաճոյ՝ այլ կրողաց ան-  
հաճոյ ժամանակը , յորում չասան և  
ձնձուկ իրենց երկայն պանդխտու-  
թեան վերջը տեսնելով՝ և դառնալու  
պատրաստուելով , որչափ որ կու մօտե-  
նար ճամբորդութեան օրն՝ այնքան սրբ-  
տերնին տագնապէր կրկին կրից՝ ուրա-  
խութեան և կասկածանաց մէջ , թէ ար-  
դեզք թնչպէս պիտի գտնեն իրենց ծե-  
րունի հայրը և տուն տեղը . և ճամբայ  
չընկած փափագէին նոր և վերջին լուր  
մ'առնուլ , որ և արդարե վերջին եղաւ .  
իրենց ամեն ակնկալեալ խնդութեանց  
վրայ սփուեց սղոյ քօղը : Նաւահանգը-  
տին մօտ խորտակած նաւուն պէս եղաւ  
իրենց յոյսն այլ . և թէ ոչ պարապմամբ՝  
այլ պատահմամբ նմանելով՝ կրնային  
ասոնք այլ ըսել մեր հին թարգմանչաց

հետ իրենց սպասող և սպասեալ սիրե-  
լեայն համար . «Մինչ նոքա զմերն յու-  
» սային դարձ , և պատուասիրել մերով  
» ամենիմաստ արուեստիւս և կատա-  
» րելագոյն յարմարութեամբա , համայն  
» և մեք փութապէս դիմեալք 'ի բիւ-  
» զանդիոյ՝ յուսայաք հարանեաց պա-  
» րել , անվեհեր երագութեամբ կըր-  
» թեալք , և առագաստի ասել երգս .  
» արդ փոխանակ իրախճանութեանն  
» 'ի վերայ զերեզմանի ողբս ասելով՝  
» ողորմելի հառաջեմք . ուր և ոչ տե-  
» սութեանն ժամանեցաք աշաց նոցա  
» կափուցմանց , և լսել զվերջին բար-  
» բառն ( իշխանկան ) և զօրհնութիւն »  
( խաչկայ ) : — Ցանկալի հօր և եղբօր  
այսպէս անկարծ և ցաւալի զրկման վը-  
րայ անհրաժեշտ տրտմութեան պարտ-  
քը հատուցանելէն ետև , չասան և  
ձնձուկ թէ զգայունք և թէ կտրիճք ,

Երիտասարդական և զինուորական եռանդով բորբոքած աշուլընին և սրաւերնին զայրացեալ դարձուցին յարեւելք, իրենց չարեաց եկած կողմը. և յետ արտասուաց՝ արեան պարտք մ'այլ առին վրանին. ծանր ուխտ մը դրին. ցաւն 'ի վրէմինդրութիւն դարձուցին. սեով ծածկեցին իրենց վեստութեան զգեստները և սպաթարութեան սպառազինութիւնը. երդմունք ըրին՝ կամ այն սեու սգով իջնել իրենց արենակցաց հողը, կամ անոնց վրէմն առնըլով 'ի թշնամեաց՝ փոխել ձեւերնին:

Ծովու ցամաքի մէջ վիճակ ձգէին թէ ո՞րն աւելի շուտով զիրենք կրնայ հասցընել իրենց սիրոյ՝ ցաւոց և վրժուց ասպարէզը. ո՞րչափ կու տընտընային Պոնտոսի զնդղներն զիրենք սահեցընելու դէպ 'ի Տրապիզոն. լնչպէս տկար կու գային արևմտեան հովերն քշելու զնաւն արևուն ելած կողմը: Նոյն իսկ իրենց հլու երիվարաց ուզերն չէին երագ երագ տրոփեր խաղտեաց լեռներէն իջած և չայոց Մեծաց լեռնադաշտակներու վրայ կոխած ատեննին: Սակայն ճամբան շուտով կարճընար, անհամբերութիւնն էր որ շատ ուշ կարծցաւ, ինչուան որ երասխայ հովտաց և ձորոց ճամբաները բռնելով՝ հասուց մեր զյոգ կտրիճները այն գետոյն արևելեան դարձուածքին մօտերը: Հայրենասահման սարերն երևցան. սրտերն մեծամեծ թունդ առին թունդ տուին. հայրենեաց հողը կոխուեցաւ, չասան և ձնձուկ մոտան 'ի թոռնեան. մօտեցան 'ի նկան. ճանչցան իրենց բերդին ճամբան, իրենց պատանեկութեան խաղուց և ճիավարժութեան դաշտումարդք. երևցաւ հայրենի և ծնողական ապարանից աւագ աշտարակն... Այլ ուր էր իր կարմիր-կանաչ նշանակն. իր պարձանաց դրօշն... ինչու չէին լսուեր իշխանական փողոց հնչմունքն և որսական եղջերաց վանդիւնքն. ուր ընկած լուէին թոռնեանայ զափն և թմբուկն... Չէին լսուեր ձայնք աւետաւորաց, ձայնք բարեաւ տեսութեանց. չէր լսուեր ձայն հօր, ձայն եղբօր. չէր հասներ առիւ-

ծային բարբառն խաչկայ, և անուշակ կանչիւն իշխանկան: . . . Ով սրտաթափ լուլթիւն. ով աներթեեկ ճանապարհք, ով ամայութիւն հայրենեաց. և չար քան զամենայն՝ ով անմեծարդերզմանք... Քաջաց պէս ընկան, ինչու դեռ անպատիւ մնան. թուէր թէ առանց վրիժուց պիտի չկարնային խաղաղիլ 'ի հող՝ խաչկայ կմախքն. և ոչ շուշանն վայրենի պիտի շարժէր իր բաժակներն իշխանկան հողվերաց վրայ, քանի որ անոնց նշանակն գերի ընկածէր յօտարութեան: Եթէ անհնար է անկեալ քաջաց արեւ յետ դարձընել, միթէ չէր հնար յետ դարձընել անոնց արեւն ետքը ամենէն սիրելի բանը. զէննու զարդը:

Այսպիսի կրքերով միանգամայն խորագիտութեամբ առանց ժամանակ ծախելու՝ չասան հայրենի իշխանութիւնը պայազատերվ, կանչեց իրեն դրացի և առաջուց ծանօթ ու բարեկամ Քուրդ ույիս մը, որուն վրայ վստահ էր. թափեց դիմացը հաղար կարմիր, հայ քըրտինքով շահած յունական գանձ, հաղար ոսկի. Ա՛ռ, ըսաւ, ու ասոնց տեղ ոչ զէնք ոչ զինակիր կ'ուզեմ քեզմէ ինծի օգնութեան ու վրէմինդրութեան. հապա ինծի դէմ մարդ ու թշնամի՝ գունդեր ու բանակներ. այնչափ որ սիրտս հանգչի, և հօրս ու եղբօրս այրեցուքը մարեմ: Գնաւ պտըտէ ձէնէ իմ երկրիս չորս կողմը, իմաց տուր Հերայ տնաւեր բռնաւորին, արթընցու այլազգիները. ինչ ապշեր դադրեր էք, ըսէ. ինչու չէք վազեր թալներ զթունեան, քանի որ անտէր ու շուար մնացեր է. ելէք եկէք ու միանգամայն տակն ու վրայ ըրէք խաչկայ երկիրը, որ իրեն պէս անհետ կորսուի: — Յանկարծ գանձ գտած Քուրդն պնդեց մէջքը հազար կարմրով շարած կամարը, թուաւ իր քալուկ ձիուն վրայ, ու երկայնաճօծ նիզակը ծուած՝ մոլեկան զիսաւորի պէս չորս սահման ման զալով՝ ձենէր զրդէր ուզք հանէր այլազգիները զիմել թալնելզթունեան, մտնաւանդ Հերայ ու Սալմաստայ ապատակները: «Երթանք, ըսին, մէկ ան-

» գամով հիմնայատակ ընենք շէնքերը ,  
» այրենք աւրենք դաշտերը , յատակին  
» հողն օդուն հանենք » : Զայն տուին  
իրարու , մարդ մարդու ձի ձիու հասու-  
ցին , գունդեր բանակներ կապեցին .  
15000 զինեալ և հեծեալ խառն՝ ի խուռն  
յարձակմամբ ահեղ սպառնալեզր հե-  
ղեղաբար թափեցան ՚ի թոռնեան :

Լսեց , տեսաւ , զուարթացաւ խաչ-  
կայ պայազատն . մոնչեց ինքն այլ ա-  
ռիւծաբար . ցատքեց իր կրակոտ երի-  
վարին վրայ , բարձրացուց հայրենի  
դրօշը , հնչեցուց անգամ մ՞այլ հայկա-  
կան թմբկին խրոխտորոս գոփիւնը : ...  
Լսեցին , զարմացան , սոսկացան բիւրա-  
ւորքն ասպատակաց . և այլ աւելի ափ-  
շեցան՝ երբ ամսյի և ոչնչանալու մօտ  
կարծուած թոռնեանայ դաշտաց վրայ  
իրենց դէմ 5000 զինեալ ու հեծեալ  
հաստաբազուկ չայեր տեսան , զորոնք  
իբրև պղնձագամ կօշկաց կոփելովն հո-  
ղէն դուրս հաներ էր չասան . որ և եղ-  
րօնն հետ սպառազինեալ , և դեռ սգոյ  
նշանն այլ զրահից հետ խառնելով՝ ե-  
րասխայ և Գողթան հին դիւցազանցնը-  
ման սիգալով վեր վայր կու գայր իր  
գնդին մէջ : Հայոց անկարծելի պատ-  
րաստութիւնն տեսնելով՝ թշնամիք այլ  
պատերազմի պատրաստիլ կ'ուղէին ,  
երբ չասան արտորալով երկու բանա-  
կաց մէջ մտաւ , ու գայրազին և տիսրա-  
զին խառն և ահեղ ձայնով մը կանչեց ,  
իմացուց որ իր հօր անպարտ արեան  
վրէմն առնուլ եկեր է , և հրաւիրէ ա-  
նոր սպանողն իր դէմն ելնելու և մենա-  
մարտելու : Հրաւէրքն ընդունայն արձա-  
գանգ մը չտուաւ . այլ խսկոյն կարդ  
կարդ զինելոց ետեէն մըրկէ փրթած  
սև ամպի կտորի պէս՝ առաջ անցաւ  
բանակէն դուրս ցատքեց , չասանայ դիւ-  
մացն ելաւ հսկահասակ սեւ մը , որուն  
գոյնն և չափն աւելի վախ ձգէին քան  
սպառազինութիւնն . որոց նման էր սիր-  
տըն այլ՝ խիստ և յանդուգն . ձայնն այլ  
կծու և սրտախոց , մանաւանդ չասա-  
նայ , երբ կանչէր , թէ ես եմ հօրդ ըս-  
պանողն . և ահա կու տեսնես ներքեւս  
իր ձին , ահաւասիկ իր թուրն ու դրօշն .

եթէ կտրիճ ես՝ առ ու տար : Ուրիշնե-  
րու սոսկումն ազգեցին այս ձայնս ու  
տեսքն , բայց չասանայ սրտմութիւն  
ու վրէժ . տեսնելն լսելն և փայլական  
նման սև ամպին վրայ զարնուիլն ու  
յերկու ճեղքելն մէկ ըրաւ . անանկ ու-  
ժով թուրն իջուց սեաւ հսկային ուսին  
ու վզին միջոց՝ որ աջ ու ձախն իրար-  
մէ բաժնուած երկու պատառ ընկան :  
Հասան հօրը ձին ու զրահներն առած  
ու դեռ կայծակնաթափ աչզր դարձաւ  
իր բանակը :

կարգն եկաւ Ճնճղկան , որ անհամ-  
բեր կու սպասէր իր մեծ եղբօր գործը  
վճարելուն . և նոր որոտմունքով դուրս  
ցատքեց իր գնդէն , անվախ ու համար-  
ձակ կանչելով իր տղայ եղբօր՝ իշխան-  
կան խոչոշ գազանը . որուն յանդգնու-  
թեան և արհամարհանաց չլուելով՝ մէ-  
կէն երևցաւ կտրիճ Պարսիկ մը . Ահաւա-  
զիկ՝ կ'ըսէր քու մալաղ եղբօրդ սպիտակ  
ձիուկն . ահա իր դրօշն ու նշանն , ահա  
իր զէնքերն . թէ կտրիճ ես եկ ու առ .  
ապա թէ չէ՝ ես զքեզ խաւրեմ քու եղ-  
բօր քով : ... Այլ երկայն չկարցաւ ը-  
սել և հայհոյել . վասն զի իշխանկան  
նշանիկը տեսնելով՝ Ճնճղուկ , զոր թե-  
րևս ինքն այլ անկէ առաջ կրեր էր , ա-  
րեան և արցունքի գորշեզր աչքերն լր-  
ցուած՝ մորակեց ձին , դրաւ ուումբը  
դէմ սրտի Պարսիկն , հրեց թափ ան-  
ցուց , ՚ի գետին փռեց իր եղբօր սպա-  
նիչը . և անոր ցատքըտուկ սպիտակը  
ու զէնքն և զարդերը յափշտակելով՝  
դարձաւ խնդութեամբ չասանայ քով :

Երկու եղբարք այլ իրենց ազնիւ հա-  
րազատաց վրէժն առնելով , աւարնին յետ  
գարձնելով՝ իբրաւուաջին և երկրորդ յաղ-  
թանակն ըրած հաշուեցին . մնայր եր-  
րորդ մ՞այլ , իրենց երկրին և մարդկան  
մնասներն այլ փոխարինելու : Արդէն  
թշնամիք այլ այս բանիս յորդոր տային  
իրենց շփոթութեամբ և խուճապելազու ,  
իրենց կողմէ երկու շահատակաց՝ խափ-  
շրկին և Պարսիկն ընկնալ և թալնիկը  
տեսնելով . ոմանք փախչելու ոմանք կը-  
ռուելու կու շարժէին , երբ չայք յար-  
ձրկեցան վրանին . և թէպէտ անոնկ ե-

ուապատիկ աւելի էին թուով, բայց չի-  
կըրցան Հասանայ և ձնճղկան և անոնց  
նմանեաց յաղթել կամ երկար դէմ կե-  
նալ. թոռնևանայ և Արծրունեաց վրի-  
ժուց օրն էր. քսան տարիէն վեր դադ-  
րած թրերն Հայոց՝ չդարձան 'ի պա-  
տեան, մինչև 4000 այլազգի փոեցին  
'ի փոշի. մնացեալներն այլ հարածելով  
հանեցին իրենց հայրենի սահմաննե-  
րէն շատ հեռու :

Կատարեալ յաղթանակաւ դարձան  
Հասան և ձնճղուկ, օրհնութեան և գո-  
հութեան ձայներով. պանծալի հին  
թմբուկն հայկական՝ կանաչներով պը-  
սակուած՝ խառնէր իր անընդհատ թո-  
պիւնն՝ իշխնդարձող բարձրապինչ բար-  
ձրափոխնչ երիվարաց տրոփմանն և խըր-  
խըրնջման հետ. և երբ յառաջ քան ի-  
րարմէ զատուելով իւրաքանչիւր իր  
տան ճամբան բռնելն՝ վերջին անգամ  
մէկ տեղ հաւքած հանդիսացան 5000  
հեծեալքն Հայոց, որոցմէ քիչեր ընկեր  
էին հայրենի հողուն վրայ, Հասան և  
ձնճղուկ հասարակաց հանդիսին մէջ  
ամենուն շնորհակալելով և իւրաքան-  
չիւրին վարձքը և արժանը տալով, ապա  
հանդիսապէս իրենց քաջութեան և սի-  
րոյ ուխտն այլ ամբողջացուցին. — քա-  
կեցին հանեցին հօր և եղբօր սպանման  
յուշարար սգոյ սեւ նշանները, և անոնց  
տեղ՝ թշնամիներէն նոր յետ դարձու-  
ցած հարազատաց նշաններովն կապուե-  
ցան զարդարեցան. և դալար թուփե-  
րով ու պայծառ ծաղկներով, և խաչիւ-  
ու խնկով նորէն սրբեցին սարեցին խաչ-  
կայ և ձնճղկան գերեզմանները. ծաղ-  
կներէն աւելի օրհնէնք թափելով անոնց  
վրայ բերանով բիւրաւոր բազմութեան,  
որ անոնց բոլորը մատաղ և ազապ վայե-  
լեցին, և լեցուն սրտով ու ձեռքով դար-  
ձան 'ի տուն 'ի տեղ. երբ Հասան և  
ձնճղուկ այլ Նկանայ աշտարակին ծայ-  
րը աղատարար սաւպունեցին հայրենի  
դրոշն՝ ի դրուանս զովարար հովոց և զո-  
վացեալ սրտից :

Ո՞չափ ատեն, քանի տարի արդեօք  
այն անարգել հայրենի օդոց ծնունդըն

(Հովերն) խաղացին քծնեցան Արծրու-  
նեաց յետին պանծալի դրօշուն հետ . . .  
յետ քաջապէս և վայելչապէս կատա-  
րելոյ իրենց հօր և եղբօր և երկրին պա-  
հանջած վրէժը, այս բարերազդ և փա-  
ռազարդ եղբարքն՝ կրցան դիմանալ  
Սէճուգեանց յարձակման դէմ. որք  
այս գործէն քիչ ետև նորէն մտան 'ի  
Հայաստան և հետղհետէ տիրեցին գրե-  
թէ բոլոր մեր աշխարհին : — Ասոնց  
բռնութեան դէմ կոռւելն 'ի հարկէ ան-  
օգուտ և անկարելի էր թոռնևանայ իշ-  
խանին. ինքն իրեն վայելուչ և հայրենի  
պատմութեան մէջ միշտ պանծալի գոր-  
ծըն արձանացուց . որոյ փառաց անակն-  
ունելի կերպով մը վարձըն այլ համե-  
մատ եղան . որ թերեւս քեզի այլ ծանօթ  
չէ, Հայկակ : Խաչկայ պայտազատն Հա-  
սան՝ կ'երեկ՝ թէ ոչ դաշտաց՝ գոնէ իր  
ամուր բերդին վրայ յամառեալ տի-  
րեց և չիջուց դրօշն 'ի վայր . մինչև որ  
ինքնին իջաւ խաչկայ հետ հանգչելու 'ի  
քնարանս հարանց . իսկ իր պայտազատ  
որդին՝ Ապղարիպ ուրիշ հայ իշխանաց  
հետ պանդիստութեան ցուպն առաւ ,  
բայց անոնց պէս աննշան անտես չմնաց.  
այլ ինչուան կիւփիկիոյ մայրաքաղաքին  
Տարանի, և միւս մեծ քաղաքին Մա-  
մեստիոյ՝ տէր և կողմնակալ եղաւ Ա-  
լեքս Ա կայսեր ատեն և անկէ առաջ .  
քաջութեամբն ապահովցուց չէնցուց  
այն կողմերը, և բարեպաշտութեամբն  
շատցուց սրբազն չէնքեր, բարձանց  
վրայ և դաշտաց մէջ կանգնելով տա-  
ճարներ . ապահովութեան համար ընտ-  
րեց երկու անառիկարմար դիլքով բեր-  
դեր՝ Տօրոս լերանց դժուար կողմերը ,  
զՊապեուն և Լամբրուն . առաջինը՝ իրեն  
ընիկ տուն տեղ պատրաստեց, ամրը-  
ցուց, և անոր տաճարին քով շինեց ի-  
րեն և իրեններուն համար յետին ընա-  
կարանն այլ, գերեզմանատունն : Այս  
բանիս մեծ հոգ ունէին մեր նախնի պայ-  
ազատք . ուր տեղ որ բռնէին՝ նախ ա-  
զօթից տուն և ապա անոր քով կամ  
մէջ իրենց մահուան տունն այլ տնկէին :  
իսկ երկրորդ բերդը տուաւ իր սիրելի  
պանդիստակից նիզակակցին, որ իրմէ

աւելի հեռու հայ աշխարհէ մը ելեր ե-  
կեր էր, յԱրցախոյ աշխարհէն՝ Մայ-  
րեաց-ջուրք ըստած տեղէն, և էր իշ-  
խանն Օշին. Լամբրոնի հետ ընծայեց  
անոր իր հայրենի տունէն բերած և  
անոր սրբազան պահպանակ Ա. Պետրոսի  
գլխաւոր առաքելոյն մասունքն, զոր  
հանգոյց Օշին շինած տաճարին մէջ՝ ի  
Լամբրոն, զոր և նորոգեց ու ամրացուց.  
և ինքն այլ հոն դրաւ ու գտաւ իր գե-  
րեզմանը. իր համանուն թոռն Օշին (որ  
դի չեթմոյ) հայր եղաւ հռչակաւոր Ա.  
Ներսիսի (Լամբրոնացւոյ) : Իսկ Հասա-  
նայ որդին Ապղպարիպ այլ ննծեց՝ ի Պա-  
պեոն, առաջուց բաժնելով ժառան-  
գութիւնը. կ'երեկի թէ արու զաւակ չու-  
նէր. մէկ դուստրը հարսնացուց Դաւթի՛  
Գաղիկ Բ Բագրատունեաց վերջին թա-  
գաւորին որդւոյն. միւսն այլ տուած  
կ'երեկի Օշին. վասն զի ասոր որդին չե-  
թում՝ զբերդն Պապեոնի տուաւ իր  
Սմբատ որդւոյն. ըսել է որ ինքն էր  
անոր մերձաւոր ժառանգն . (զջարսոն  
այլ Ապղպարիպ տուեր էր Օշին փեսայ  
իշխանի մը) : Այս չեթմոյ որդւոց ան-  
զրանիկ ճիւղն յաջորդաբար տէր եղաւ  
Լամբրոնի. երկրորդն այլ՝ Պապեոնի.  
որոյ առաջին տիրացող յիշեալ Արմ-  
րատն՝ իր Ռիթա դուստրը տուաւ՝ ի կը-  
նութիւն Ստեփանէի՝ Ռուբինեանց պայ-  
ազատին. յորոց ծնաւ մեծն և առա-  
ջին թագաւորն Լեռոն. ասոր դուստրն  
և ժառանգն Զապել զշխոյ՝ հարսնացաւ  
յիշեալ Ամբատայ թոռան՝ կոստանդին  
Մողոնի (որդւոյ Վասակայ) որդւոյն

հետ, որ է Հերում Ա. և այսպէս միա-  
ցան երկու ճիւղքն Պապեոնինեան և լամ-  
բրօնեան, և երկու մեծ ցեղքն՝ Արծրու-  
նի և Բագրատունի, թէ և մայրենա-  
խառն : Այսպէս կերպով մը երկրորդ  
անգամ այլ, և զրեթէ մինչև ի հազար  
տարի վերջ, կատարեցաւ մեր Խորին  
հայրենախօս պատմահօր մարգարէու-  
թիւնն (Խորենացւոյ), թէ Այդ երկու  
մեծ ցեղերէն՝ ի Բագրատունեաց և  
յԱրծրունեաց՝ թագաւորներ պիտի ըլ-  
լան Հայոց յետ շատ ժամանակաց : Արդ  
Բագրատունի թագաւորութեանն առա-  
ջին հեղինակ եղաւ Աշոտ (887), երկ-  
րորդ՝ յետ 200 տարւոյ՝ Ռուբէն կամ  
Լեւոն Ռուբինեան . իսկ Արծրունեաց՝  
նախ Խաչիկ-Գաղիկ, և երկրորդաբար  
մը անձամբ թոռանցն՝ մեր թոռնեանցի  
ԽՈՒԼ ԽՈՂՉԻԿ<sup>1</sup> :

Հ. Դ. Մ. ԱԼԻՇԱՆ

1 Մեծին Կերսիսի նշխարաց գիւտին պատմին  
(որ թուի Յ. Երզնկացին) կ'ըսէ վասն « Ռուբենի  
» մեծի իշխանին, որ էր՝ ի զօրացն Բագրատու-  
» նեաց և յագէ նորին, և՝ ի քանէ և՝ ի քանէ Արծրու-  
» նեաց . որ և մեր պապկաւորն Լեռն (Գ., որդի  
» Զապելի և չեթմոյ), զերկուցն ունի թագա-  
» ժառանգ ազգաց զազգականութիւն » : Ըսել է  
որ այս Լեռնա երկու Ճիւղով այլ յԱրծրունեաց  
էր, իսկ իր հայրն չեթում մէկ Ճիւղով, որոյ սկիզբն  
կ'ելնէ յօշն՝ մտերիմն Ապղպարիպայ . բայց՝ ի  
պատմչաց յայտնապէս յիշուած չէ ասոնց ինա-  
մութիւնն, ինչպէս և ոչ Ա Ռուբենի այլ ինչպէս  
վերջն Գագկայ խնամի և Բագրատունի ըլլան :  
Գուցէ ինքն իսկ Օշին այլ՝ որ յԱրցախոյ եկած  
կ'ըսուի և՝ ի Գանձակայ կողմերէն՝ բնիկ ազգաւ  
Արծրունի ըլլայ :

## ՀԻՆ ՔՆԱՐ

Մեղեդի Խաչին .

Քերովբէից գերարփի փառքը փառաղարդեալ՝ յայտնեաց զբեղ հողա-  
նիւթ մարդոյն :

Քանզի սերովբէն բոցեղէն սրովն քառավտակ հոսէր զհուրն, պահելով  
զճանապարհս ծառոյն կենաց զանմահական տնկոյն :